«Արդշինբանկ» ՓԲԸ Խորհուրդը 2019 թվականի ապրիլի 30-ի թիվ 06/19-05 Լ որոշմամբ որոշել է՝

1. Վճարել միջանկյալ շահութաբաժիններ «Արդշինբանկ» ՓԲԸ «Ա» դասի արտոնյալ բաժնետոմսերի համար, հաշվարկված համաձայն «Արդշինբանկ» ՓԲԸ կանոնադրության $9^1.3$ կետի 1-ին ենթակետի:

2. Միջանկյալ շահութաբաժինները վճարել Բանկի «Ա» դասի արտոնյալ բաժնետոմսեր ունեցող Բանկի այն բաժնետերերին, ովքեր ընդգրկվել են Բանկի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերի ռեեստրում 2019 թվականի ապրիլի 15-ի դրությամբ՝ ըստ Բանկի կանոնադրական կապիտալում նրանց մասնակցության համամասնության:

3. Միջանկյալ շահութաբաժինների վճարումն իրականացնել 2019 թվականի մայիսի 31-ին՝ համապատասխան գումարը «Արդշինբանկ» ՓԲԸ «Ա» դասի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերի բանկային հաշիվներին փոխանցելու միջոցով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: